



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 12.

Վ. ՓԵՓԵՋԵԱՆ

ԲՈՂՈՂ ԽՈՂԸ

(ԷՐՈՅՑ)

891 99

Վ-31

ԲԱԳՈՒ  
ՏՄԱՐԻՆՆԵՐՈՒ  
1903

100  
111

47  
35  
346


100  
111  
100

ЛЕТУЩАЯ СТРЕЛА

№ 101

100

100



Издать книгу Софьи Теръ Николаевны.  
Микрофильм

Handwritten numbers and symbols on the left side of the page, including "51" and "8-10".

Handwritten number "12170" at the top left of the right page.

Հ. ՓԱՓԱԶԵԱՆ

13 APR 2011

Handwritten calculations: 4-17 // 891.99, 6878, 4-31, and a signature.

Handwritten number "4-12" in the top right corner.

Թ Ռ Ղ Ո Ղ Խ Ո Ղ Շ

( Չ Ր Ո Յ Յ )

Handwritten numbers "1007" and "3273" written vertically.

Handwritten number "415" with a diagonal line through it.

Handwritten signature or name "ՀԵՑ ԻՄՔԵՐ" written vertically.



Հ Ա Ղ Ո Ւ  
Տ Գ Ր Ա Ն « Ա Ր Ո Ր »  
1903

59.979

Բան

28.08.2012

Չ Ե Ր Ո Ւ Կ Բ Ո Շ Ո Ւ Գ

188079

Дозволено Цензурою. Тифлисъ, 16 Августа 1903 г.

# ԹՈՂՈՂ ԽՈՂԸ

(ԶՐՈՅՑ)

**Մ**եծ-սի ժայռի տակ, ազոտ-զարչահոտ, տղմուտ ճահիճ կար և այդ ճահճի մէջ, ամառայ շոգին, գալիս էր թաւալելու, փոքր ինչ ննջելու մի գիրուկ մեծ խոզ:

Հանգիստ անկիւն էր. տիզմն առատ, խոնաւ, ազտեղի. խոզը՝ շատակեր, ինչպէս ամեն խոզ, ճարպոտ ու գիրուկ՝ ինչպէս սորտաբայծ. լաւ ուտելուց յետոյ մի կողքի վրայ պարկում, առաջ երկար թաւալում, ցեխով շաղախում, յետոյ ստները պարզում, մուկթը ցցում և խոքնչարով, աչրերը փակած կամ լուռ՝ մարտում էր և կամ թէ ննջում:

Եւ երջանիկ էր, գոհ ու լիառատ. ազգ՝ փառք Սատուծոյ, առատ ու պարարտ, ինքն

էլ—երբէք հիւանդ, միշտ ճարպոտ, առողջ, մուսթը ցեխոտ, հազուստը շքեղ տղմով թաթախուն:

Ել ի՛նչ հոգս ունէր, կամ ի՛նչո՞ւ երազ, ճահճից վեր՝ մտքեր, տիպից բարձր՝ վերելք, ազգից գուրս՝ այլ օր:

Ու մի ամառուայ օր, երբ այգալէս ճաշած, մուսթը մինչև աչքերը տղմոտ, փորը ստնեբրին կաշելու շափ տկուղած հասաւ ճահճիճին, մեկնեց մի կողքի վրա, մի աչքը միայն բաց լռիկ մարտում էր—յանկարծ մի ձայն լսեց իրենից վերև:

Քիչ աչքերը բարձրացրեց և ի՛նչ տեսնէ:

Մի արծիւ էր այն. սլանալով իջել, ժայռի գլխին կանգնել, կռացել պարկած խողիւն էր նայում:

Գիտակ էր կարծել. բաղցած էր. մտածել էր հեռւից փալիւղ սալիտակ գիրուկ ազգրից մի քիչ ճաշակել:

Բայց երբ գլուխը կռացրած՝ տեսաւ որ խողը շարժուում էր, աչքերը պտտցնում, ասաց նեղացած:

— Ահ, ուրեմն գիտակ չէ՞ս եղել դու...

կարծում էի թէ մեռած ես: Գիտես, շատ ախօթի եմ:

— Իսկ ես լաւ կուշտ եմ. խօսեց խողը—և ահա այժմ եկել հանգստանում եմ:

Յետոյ հեղձօրէն ժպտաց ու աւելացրեց:

— Չը գիտէի որ արծիւը կարող է անօթի մնալ, ուտելիք չը գտնել... Եթէ կուզես, ի՛նչ կայ, իջիր, ճահճիճի մէջ որդ ու գորս՝ որքան կուզես... Համեցէք, մի քաշելի...

— Ենտրհակալ եմ. ասաց արծիւը—մենք ոչ որդ ենք ուտում և ոչ էլ գորտեր... Այ, եթէ այգրան բարի ես, թող տուր այգ ազգրիցդ մի կտոր վերցնեմ և դա ինձ բաւական է:

— Ինչպէ՛ս չէ... ծիծաղեց խողը— իմ ազգրը քեզ նմանների համար չէ պահւած... Ասում են որ նրանից ազնիւ ու համով ապուխտ են շինում և շատ թանկ գինահատում... Իսկ քո մսից, ոչինչ չեն շինում:

— Ոչինչ: Մեր միտը չէ ուտում:

— Յուհ... երևի անհոտ միս է... Խոտտովանում եմ, ես երբէք չեմ սիրում հոտ չունեցող բաները:

— Կերածներդ միթէ միշտ հոտած բաներ են:

— Միշտ: Նրանք բոլորն էլ անշուշտ հոտած են և լաւ հոտ ունին... Այ, հէնց այ-

սօր, քիչ առաջ. աղպանոցի մէջ ինչ ասես  
չը կար.— հոտած միս և հաց, սեխի կճեպներ,  
բանջար, արմատներ... Գու արմատներ չէն  
ուտում:

— Աչ. միմիայն միս:

— Ես ամէն բան ուտում եմ. աղնական  
չեմ ես. սիրում եմ ուտել ամեն բան. խորու-  
թիւն դնել չը պիտեմ. ինչ տան՝ ուրախու-  
թեամբ... Բայց գիտես, բարեկամ, վիզս ցա-  
ւեց քեզ նայելով. եթէ ուզում ես հետս խօսել,  
իջիր և կողքիս կանգնիր... Մանաւանդ որ այս-  
տեղ շատ աւելի գով է քան այրտեղ—այրող  
արևի տակ:

Արծիւը երեքքրեց դուխն ու ասաց.

— Աչ... այստեղ լաւ է. տիզմիդ մէջ եթէ  
իջնեմ՝ կը խրեմ:

— Եւ ինչ կըլինի դրանից. հետաքրքրու-  
ւեց խոզը զարմացած— աւելի լաւ չէ. զո՞վ,  
թագ...

— Կը կեղտոտեմ:

— Ինչպէս... կեղտոտեմ... Եւ միթէ  
կեղտոտելը վատ է: Ես ուրիշ տեսակ չը պի-  
տեմ. իմ հաճոյքն է այդպէս թաւայել, վերար-  
կուս տիզմով զարդարել, մաութս նրանով օծել...  
Գիտես, այդ մինչև անգամ օգտակար էլ է.  
մարդ գովանում է, մի տեսակ երանութեան

մէջ ընկնում... Խոստովանում եմ. ես առանց  
դրան ապրել չեմ կարող:

— Հասկանում եմ. այդպէս էլ ծնել ես:

— Սյո... Եւ չեմ հասկանում թէ ինչ-  
պէս այդ վերարկուդ նախ չէ այրում արե-  
գակից, յետոյ՝ չէ այրում քեզ. Միթէ դու գս-  
վանալու պէտք չես դգում երբէք, մանաւանդ,  
երբ ինձ պէս ուտես, մի լաւ կշտանաս...

Ու խոզը մեծաձայն յորանջեց, շուռ մուռ  
եկաւ, նոր տղմով թաթախեց, խոնչիւնով  
մառութը կոխեց ճահճի մէջ, տրորեց հաճոյքով,  
մեծ բաւականութեամբ:

Արծիւը նայում էր նրան զգուանքով և  
մտածում էր թէ արդեօք չ'իջնել—կտուցի մի  
հարւածով կտրել մի կտոր միս փայլուն ազդ-  
րիցը և թողնել հեռանալ:

— Հը՛մ, խը՛մ, խը՛մ... արեց խոզը նորից  
պառկելով—Այ թէ ինչ կատեմ քեզ, արծիւ:  
Հաւատացիր ինձ, տղմի մէջ ապրելուց լաւ  
կեանք լինել չէ կարող. նախ՝ որ կուշտ կը լի-  
նես և ոչ քեզ պէս անօթի. յետոյ կը գիրա-  
նաս և ոչ՝ այդպէս կմախր կը մնաս և երրորդ,  
որ երբէք շոգը քեզ չի նեղացնիլ... խը՛մ, խը՛մ...  
ինձ չես հաւատում... հարցրու ուրեմն զոր-  
տերին, որդերին... Այ, տեսնում ես. բոլորն  
էլ գիրուկ, առողջ են և կուշտ:

— Տեսնում եմ. ասաց արծիւը—երևում է որ ճահիճի մէջ ապրելը թէ կշտացնում է և թէ գիրացնում:

— Անպատճառ. հաստատեց խողը—Ապացոյց դրան՝ որ ոչ մի նիհար խող չես տեսնիլ. նոյն իսկ մեր ձագերը գիրուկ են... իսկ ինչ էք դուք—թռչուններդ, որ չը գիտեմ ինչու թռնում էք այդ բարձրերում, վերաբերունիդ պարզում, արևի տակ ոտերնիդ ցնցում... ինչ ունիք ասի այնտեղ. մեծ բան կայ այդ դատարկ տարածութեան մէջ, որ այդբան սիրում էք մանգալ այնտեղ... Այ իջէք այստեղ. առան կերակուր, գովացնող թարմութիւն, փափուկ անկողին... Հը՛, Աստուածդ սիրես. ասա, ինչ լաւ բան կայ այն բարձրերում... օրինակ հէնց, ինչ ուտելիք կամ ինչ խմելիք կայ և ո՞րտեղ է...

Արծիւը կտուցը բաց ու խուփ արաւ, թեւերը թափահարեց, մեծ քրքիչ արձակեց ու ասաց.

— Հասկանում եմ ՚ի հարկէ. սրտելից մի խող իմանոյ բարձրութիւնների մէջ թռնելու հաճուքը, մաքուր օդի ազնւացնող ազդեցութիւնը, լայն հորիզոնի գեղեցկութիւնը...

— Ի՞նչ, ինչ, ինչ... խռկացրեց խողը—նորից կրկնիր... հա՛, հա՛, հա՛... ա՛յ լաւ ասացիր... բանաստեղծ ես եղել, բարեկամ փետ

քաւոր... իսկ անօթի լինելդ, կմախքային նիհարութիւնդ... դրանց ինչ կասես, դրանց... Այնտեղ—այդ բարձրութեանդ, մաքուր օդիդ և լայն հորիզոնիդ գեղեցկութեան մէջ սեխի մնացորդներ կան, ազդի պարարտ ու որդնալից պատառներ լինում են, տղմային զով ու փափուկ անկողին գտնում է...

— Քեզ հետ խօսելն էլ աւելորդ է. գոչեց արհամարութեամբ արծիւը—դու ոչ մի գաղափար չունիս մաքրութեան, գեղեցկութեան մասին...—

Ա՛յ կասես. կանչեց խողը—Չունիմ. մաքրութիւնս օրն է, գեղեցկութիւնս սրն է... փորդ կնշտ է, մարմինդ պարարտ, անկողինդ փափուկ—ահա քեզ և մաքրութիւն և գեղեցկութիւն. մնացած ամեն ինչ յիմարութիւն է և ցանցառամտութիւն... Գնա՛, եղբայր, գնա՛ քաղցած փորովդ՝ մաքրութեանդ ու գեղեցկութեանդ մէջ...

Աօաց խողը, նորից մի լաւ յօրանջեց, շուռուռ և կաւ տղմի մէջ, մուտքը նորից կոխեց— թացացրեց և աչքերը փակեց:

Այն ժամանակ արծիւը, որ անօթութիւնից նւաղելու մօտ էր, գլուխը բարձրացրեց ու նայում էր այս այն կողմ՝ զոնէ ուտելու բան գտնելու համար:



Բայց խոզը, որ միայն մի վայրկեան էր աչքը փակել, նորից բաց արաւ, հեղեղութեամբ դիտեց արծւի զբազմունքը մի բոպէ, յետոյ առաջ ծաղրով.

— Հը... բան չը կայ ուտելու, քաղցած ես... Խեղճ մարրութեան ու գեղեցիկութեան սիրահար. երևի վերջ ՚ի վերջոյ պիտի բարեհաճես մեր կողմն իջնել և մեր կերածից բաժին ուզել...

Արծիւը, որ յանկարծակիի էր եկել, բարկացած ճշաց.

— Երբէք... Բայց այ, որպէսզի իմանաւ թէ արծիւը գիտէ քեզ նման խոզերի ուտել, հիմա պիտի իջնեմ և այդ գեր ազդրդ ամբողջովին պակ տամ ու վերցնեմ...

— Կամայ, կամայ... գոռաց խոզը, և վախից վեր թռաւ, նստաւ: Այդպէս յիմարութիւն, յոյս ունիւմ որ չես անիլ... Եւ վերջապէս — աւելացրեց նա մի քիչ սիրտ առած — ես այժմ գիտեմ քեզ նման բանաստեղծներին վախցնել... Այ, տեսնում ես, այժմ ես նստել եմ... Նայիր, տեսածդ ի՞նչ է:

— Գարշելի մէջքդ և մառութդ:

— Ահա... հէնց այդ է՝ որ կայ. զարգարուն հագուստս և բերանս... Գէհ, իջիր տեսնենք, մարրութեան և գեղեցիկութեան սիրահար.

հար. տեսնենք կտուցդ կը կամենամ տղմտել...

Արծիւը, որ պատրաստուում էր ասածը կատարելու և արդէն քիչ բարձրացել էր, նորից նստաւ: Իրաւ որ, զգուշի էր խոզը իւր գարշահոտ մէջքովն ու մառութովը, մինչ փափուկ ու սպիտակ ազդրն իսկ այժմ կոխել էր տղմի մէջ:

— Իջիր էէ... քրքչաց խոզը — Համեցէք, ազդրս էլ այստեղ է. տիղմի մէջ. կտուցդ առաջ տիղմի մէջ պիտի մտնի, որ նրան հասնի... իջիր տեսնենք...

Արծիւը չ'իջաւ: Լուռ և անշարժ նստել էր, դէմքի վրայ միմիայն խորին զգուշքի արտայայտութիւն ունենալով:

— Հը, սնց ես. խօսեց նորից խոզը — տեսնում ես որ իդուր ինձ անհանգիստ արիր: Գնա, գնա բարձրերդ. խոզերիս շատ էլ միամիտ մի կարծիլ... Այ, ողջ և առատ լինի տիղմը. քեզ նմանները որ գան, մեզ շրջապատող տիղմը մեր գէնքը կրլինի... Բայց, քանի որ քունս փախցրիր, կուզես՝ մնա այդտեղ և քիչ էլ խօսենք... Սպասիր մի լաւ տեղաւորւեմ առաջ...

Առաջ, ընկզմեց տիղմի մէջ մինչև փորը, մառութը դրաւ ճահիճի վրայ, աչքերն ուղղեց արծւին և շարունակեց.

— Ահա, այժմ հանգիստ եմ: Խօսենք...  
 Այ, թէ ինչ էի ուզում հարցնել քեզ... Մի՞թէ  
 իրաւ չէ, որ բոլոր փետրաւորներէդ ուղեղը  
 ոտիս մի պճեղի չափ էլ չը կայ. խելքներդ  
 օդով լի և ինքներդ ցանցառ... Մի նեղանալ  
 խնդրեմ... Ասենք կուզես, նեղացիր, այլ ևս  
 ոչինչ չես կարող անել ինձ... Հա, պատասխա-  
 նիր խնդրեմ, իրաւ է օրինակ, որ բոլոր այդ  
 բարձր թռչողներդ, սարսափելի պարծենկոտ  
 էք և կարծում էք թէ մի առանձնաշնորւած,  
 ուրիշ տեսակի անասուններ էք...

— Չեմ հասկանում ասաց արծիւր—ին-  
 չո՞ւ ես հարցնում այդ բոլոր յիմար բաները,  
 որ բղխում են քո, ճահճի մէջ սնւած «խոշոր»  
 ուղեղից:

— Չը վիրաւորենք միմեանց. խրատեց  
 խոզը—Այ, իմ ասածն այն է, որ դուք, բարբ  
 այդ բարձր թռչողներդ, ինչ որ շատ պարծեն-  
 կոտ էք և կարծում էք թէ ձեր արածը մի մեծ  
 բան է... Նախ որ, ես թռչելու փափագ երբէք  
 չեմ ունեցել. երկրորդ որ, ինձ թւում է, եթէ  
 փափագ ունենամ, կարող եմ քեզից ոչ պա-  
 կաս թռչել...

— Ի՞նչ... ծիծաղեց արծիւր—դո՞ւ, այդ  
 ճարպոտ մարմնով՞դ, ազմաթաթախ մոռթո-  
 վը՞դ...

— Խնդրեմ, խնդրեմ... Ի՞նչ գուցէ չըզի-  
 տես, որ առողջ ու կուշտ փորով շատ աւելի  
 լաւ կարելի է թռչել...

— Ապա, փորձիր տեսնենք. իսկ թռչելու  
 թռչելու որտեղից կը գտնես:

Ու սաստիկ զարճութիւն զգաց արծիւր  
 խոզի այդ յաւակնոտութիւնից. այնպէս, որ  
 մոռացաւ իսկ քաղցը:

... — Թռչելու... ասաց խոզը—փահ... ինչ  
 սխալեմ այդ անպէտք փետուրները... մի-  
 թէ անպատճառ թռչելու պէտք է՝ թռչելու համար:

— Ապա ի՞նչպէս. զարմացաւ արծիւր—  
 առանց թռի թռչելը չէի լսել:

— Հէնց այդ է է՛... չես լսել, ՚ի հարկէ.  
 այնտեղ—բարձրում ինչ կարող ես լսել որ...  
 Թեւերը ցանցառամիտ, թեթևամիտ մարդկանց  
 համար է, իսկ կուշտ փորով, առողջ, այլ և  
 հաստատ զեռնի վրայ ման եկոկների համար  
 աւելորդ բաներ են նրանք...

— Իսկ թռչելու համար:

— Շատ պարզ է.—կը բարձրանաս մի  
 քարի, ժայռի վրայ, ոտներդ կը պարզես և  
 ահա, մէկ էլ տեսար՝ կը թռչես... Կուշտ փո-  
 րով և առողջ մարդը ինչէր չէ կարող անել:

Արծիւր ապշած էր: Մի՞թէ, իսկապէս,  
 խոզը լուրջ էր խօսում և կարելի էր առանց

թևի, միմիայն կուշտ փորի և առողջ մարմնի  
չնորհիւ թախչքներ անել:

— Գու կարո՞ղ ես այդ անել... հարցրեց  
նա—գու, որ փորդ կուշտ է և մարմինդ առողջ:

— Ե՛ս... խռնչաց խողը—հը՛մ... ասներ  
ի հարկէ, դժւար չէ անելը. բայց ինչո՞ւ, ի՞նչ  
պէտք. միթէ ճահիճս բաւական չէ ինձ և կամ  
ցած տեղերում ուտելիք է պահասում:

— Այդպէ՛ս... ծիծաղեց արծիւը— ուրեսն  
մեծախօսել զիտես և փորդ ուսցնել:

Խողը, իրաւ, թէև խող էր տղմաթաթախ,  
բայց անձնասիրութիւն էլ ունէր—ի հարկէ  
խողային—և վիրաւորեց:

— Ես չեմ պարծենում, ասաց նա—եթէ  
ուզենամ՝ կանեմ:

— Զը փորձես մէկ:

— Աւելորդ բան... կանեմ ասացի՛ և  
պրծաւ գնաց:

— Լաւ, լաւ, տեսնում եմ որ ստախօս  
ես եղել: Ուրեմն, քանի որ սնտտի պարծենկո-  
տութիւնդ երևաց, ետ առ բորբ առաջի ա-  
սածներդ:

— Այսինքն որո՞նք:

— Որ իբր թէ առանց թևի կարելի է  
թռնել:

— Ես չեմ առնիլ... Խողերը կամակոր  
են լինում... Կը թռնեմ...

— Գէ՛հ, փորձիր ուրեմն. նայում եմ...

Խողը ներքնապէս զղջաց որ այդքան ա-  
ռաջ էր գնացել: Զըզիտէր թէ ինչ բան էր  
թռնելը, բայց համոզածի պէս էր, որ եթէ  
կամենար, ինքն էլ կարող էր անել: Սակայն  
արձի հակառակելը սկսել էր կասկած դար-  
թեցնել նրա մէջ, որ գուցէ, իրաւ, թևեր են  
հարկաւոր եղել:

— Փորձենք մէկ. մտածեց նա— իսկապէս,  
միթէ չէ կարելի թռնել. ինչո՞ւ ոչ, մենք էլ  
Ս.ստամոյ ստեղծածը չենք... մանաւանդ որ ա-  
ռողջ և կուշտ ենք՝ քան այդ փետրաւորները:

Եւ դուրս եկաւ տիղմի միջից, գարձաւ  
արձիւն ու ասաց հպարտութեամբ.

— Ի՞նչ կայ. կարող եմ ցոյց տալ քեզ  
բնգունակութիւնս... Հարկաւոր է վերջապէս  
հասկացնել ձեզ—օգերի մէջ սաւառնող քաղ-  
ցածներից, որ եթէ մենք կամենանք, շատ ա-  
ւելի հեշտ է մեզ թռնել և ձեզնից էլ լաւ  
թռնել, որովհետև մենք միշտ կուշտ ենք և  
առողջ. մի բան, որ ձեզնից շատ շատերը չեն...  
Բայց ինձ հարկաւոր է նախ ելնել այդ ժայռի  
վրայ և շատ շուտ է, ինքս էլ քիչ գեր եմ...

— Քաշու՛մ ես, պատճառներ ես որո-  
նում...

— Ո՛չ երբէք... Ի՞նչ արած. կը բարձրա-  
նամ... Միայն տես, պատուիդ վրայ երգելիք,  
որ ազգրս կը մոռանան:

— Զեռք չեմ տալ քեզ, քանի ողջ ես:

— Ինչպէ՛ս... կանգ առաւ խողը յուզւած  
— Ինչպէ՛ս թէ բանի ողջ եմ: Ի՞նչ է, մտածում  
ես որ ես կը մեռնեմ:

— Սնպատճառ. ծիծաղեց արծիւը—կը  
ջարդւես, կտոր-կտոր կը լինես... Ի՞նչ խողերի  
բանն է թռնելը...

— Գէ՛հ, գէ՛հ. շատ ես առաջ գնում...  
Իսկ եթէ թռայ...

Արծիւը ծիծաղեց նորից:

— Եթէ թռար, ասաց նա—գաղափարս  
կը փոխեմ խողերի մասին և ամեն տեղ կը  
հռչակեմ՝ որ մի թռչսոյ խող տեսայ:

— Ուրեմն այդքան հազւագիւտ է եղել  
խողի թռնելը... հա՛...

— Թռնելը, նախ, բաւական դժւար է.  
և երկրորդ, չը կայ խող, որ թռած լինի:

— Ա՛յ թէ ինչ... Իսկ ես կը հաստա-  
տեմ հակառակը... թող ողջ աշխարհն իմանայ,  
որ ես—Սև ժայռի տակի ողմերի խողս՝ թռնում  
եմ... Խօստանում ես փառքս տարածել:

— Մե՛ծ ուրախութեամբ...

— Պալիս եմ ուրեմն... Տեղ պատրաս-  
տիր ինձ...

Ու խողն այս անգամ հղարտ, առաջ ան-  
ցաւ և սկսեց պտոյտներով դէպի ժայռի կա-  
տարը ելնել, որտեղից նա վճռել էր թռիչք  
գործել և ամբողջ աշխարհին զարմացնել, ա-  
նունն էլ հռչակել:

Սրիւն—բրտինք մտած, շողից գրեթէ  
խեղտւելով, մի ամբողջ ժամից յետոյ հազիւ  
նա կարողացաւ հասնել արծւին, որ ժպտուն  
դէմքով սղասում էր նրան:

Խողը մօտ գնաց, բարեկց ու ասաց:


— Իրա՛ւ, եղբայր, տաժանելի է բարձրա-  
նալը. իմ տիղմի մի կտորը չեմ փոխիլ այս  
յիմար ու չոր ժայռի հետ... և այդ ազացու-  
ցանելու համար, այստեղից թռիչք կը գործեմ  
նախ դէպի վեր, յետոյ, երբ տեսար որ կարող  
եմ թռնել, զարձեալ կ'իջնեմ իմ զով բնակա-  
րանը... Համաձայն ես:

— Ուրախութեամբ... Բայց չնւտ արա,  
խօսելն աւելորդ է. թռիր, ես սաստիկ անօ-  
թի եմ...

— Կարծեմ իմ թռնելը քեզ չի կշտացնել.  
ասաց խողը սկրտորդով ելած:

— Իսկ ես անհամբերութեամբ հէնց դրան

1007  
32473



եմ սպասում... Երբ խողը թռնել է ուզում, ար-  
ծիւր փորն է կշտացնում...

— Ուզում ես ասել որ կը ջարդուեմ:

— Անպատճառ...

— Յիմարութիւն... Դէն կաց և լաւ նա-  
յիր... Ես քո ասած խոզերիցը չեմ...

Յետոյ, հպարտութեամբ առաջ գնաց գէ-  
պի ժայռի ավր, բայց սոսկումով ետ քաշեց,  
երբ նկատեց ցածում եղած խորութիւնն ու  
քարակոյտերը:

Պահ մի քիչ մնաց ետ քաշելը և խոտու-  
վանէր յաղթւած լինելը. բայց արծիւը ծիծա-  
ղում էր: Անպիտան թռչունի շար քրքիջը վըր-  
դում էր նրան:

Ինչ որ էլ լինէր, պէտք էր ցոյց տալ այդ  
պարծենկոտին, որ խողն էլ պակաս թռչել չէ  
կարող, եթէ կամենայ:

Ու աչքերը փակեց, խռկաց ու նետեց ի-  
րեն գէպի առաջ, մտածելով առաջ մի շնոր-  
հալի պտոյտ անել օդի մէջ, յիմարացած ար-  
ժւին զմայլեցնել...

Եւ ոչ թէ այդ շնորհալի պտոյտը գէպի  
բարձր տեղի ունեցաւ, այլ, ընդհակառակն,  
ընկերակցութեամբ թռչունի քրքիջներէ, գնաց  
խողը ջախջախելու, կտոր կտոր լինելու ներ-  
քնի ժայտերի վրայ...

Եւ արծիւը, քրքիջը բերնին, իջաւ մի լաւ  
ճաշ անելու, խողի յիմարութեան վրայ ծիծա-  
ղելու...

Սյո գրոյցը երբ կարգաց մի գիտուն ու  
գեր կրօնաւոր, չը գիտեմ ինչնու, սաստիկ դայ-  
րացաւ, ոտները գետնին խփեց ու գոռաց.


— Eppure si muove! (1)...



(1) Եւ այնուամենայնիւ նա շարժում է!...

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.



Handwritten text, possibly a date or initials.



«Ազգային գրադարան»



NL0369819

ԿՐՅՍ ԵՆՆ ՏԻՅՈՒՆ ԵՒ ՊՈՆԵՄՅՈՒՄ ԿՈՆՅՈՒՄ

Ին՝նոր Երկու մ. Արքեպիսկոպոսի Ին՝ն- նոր Ա. Պատմական	3 Կ.
Անպոչ Տարիք, պատմական Կ. Սահակի Բնականի Ին՝նոր Ա. Պատմական	2 Կ.
Էսքր Կա՛ւար, պատմական պոէզիա Ա. Փափաղկանի	3 Կ.
Վերջու պոէզիա Ա. Փափաղկանի	3 Կ.
Երիզներ, Ա. Սահակի Բնականի	5 Կ.
Նրապոյի պոէզիա, պատմական Ա. Փափաղկանի	4 Կ.
Բարձր լուր, պոէզիա Ա. Փափաղկանի	3 Կ.

Այ Բաքու, Русский Торгово-промыш. Банкы.  
Тосиуу Арбеанк.